

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N° 2

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2018-2019 ուս. տարվա
գիտական խորհրդի նիստի

ք. Երևան

26 հոկտեմբերի 2018թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 24 անդամներից 18-ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սաղյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ. Ա.Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմատեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի վարիչ, կ.գ.թ., դոցենտ Անահիտ Հովհաննիսյանի (համահեղինակ՝ Գ. Մկրտչյան) կողմից ներկայացված «Փափուկ դեղաձևեր» վերնագրով ուսումնական ձեռնարկի տպագրության երաշխավորման հարցը:
2. 2017-2018 ուս. տարվա 2-րդ կիսամյակի սոց. հարցման արդյունքների ամփոփում:
3. Ընթացիկ հարցեր:
 - 3.1 ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտից լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթին մասնակիցների առաջադրման հարցը:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ

1. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմատեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի վարիչ, կ.գ.թ., դոցենտ Անահիտ Հովհաննիսյանի (համահեղինակ՝ Գ. Մկրտչյան) կողմից ներկայացված «Փափուկ դեղաձևեր» վերնագրով ուսումնական ձեռնարկի տպագրության երաշխավորելու հարցը:

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի ուսումնական հարցերի գծով փոխտնօրեն Ս. Վարդապետյանին, ով ներկայանալով տեղեկացրեց, որ անհրաժեշտ է

տպագրության երաշխավորել Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի վարիչ, կ.գ.թ., դոցենտ Անահիտ Հովհաննիսյանի և Գ. Մկրտչյանի կողմից ներկայացված «Փափուկ դեղաձևեր» վերնագրով ուսումնական ձեռնարկը: Նա նշեց, որ աշխատանքը ենթարկվել է ներամբիոնային գրախոսության, առկա է մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը (քաղվածքը կցվում է), ուղարկվել է նաև արտաքին գրախոսության: Ս. Վարդապետյանը ներկայացրեց արտաքին գրախոս, ԵՊԲՀ Դեղագործության կառավարման ամբիոնի դոցենտ, դ.գ.թ. Կ.Ս. Սահակյանի կարծիքը: Նա մասնավորապես նշեց, որ գրախոսը կարևորում է ուսումնական ձեռնարկի անհրաժեշտությունը դեղերի պատրաստման դեղատնային տեխնոլոգիա առարկայի դասավանդման հարցում: Գրախոսը նշում է, որ ձեռնարկը համապատասխանում է հաստատված մասնագիտական ծրագրին, ձեռնարկում առկա են թեստային հարցեր և կլինիկական խնդիրներ, որոնք նպաստում են ուսումնական նյութի հեշտ յուրացմանը և ամրապնդմանը: Ձեռնարկում ամփոփված նյութը ներկայացված է մատչելի, օգտագործված տերմինները, սահմանումները համապատասխանում են ժամանակակից պահանջներին, ուստի ելնելով վերը նշվածից՝ Կ. Սահակյանն այն երաշխավորում է տպագրության:

Որոշեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի վարիչ, կ.գ.թ., դոցենտ Անահիտ Հովհաննիսյանի և Գ. Մկրտչյանի կողմից ներկայացված «Փափուկ դեղաձևեր» վերնագրով ուսումնական ձեռնարկը երաշխավորել տպագրության 300 օրինակ տպաքանակով:

2. 2017-2018 ուս. տարվա 2-րդ կիսամյակի սոց. հարցման արդյունքների ամփոփում:

Լսեցին՝ փոխտնօրեն Ս. Վարդապետյանին, ով գիտխորհրդի անդամներին տեղեկացրեց, որ ստացել են «Դասախոսը ուսանողի աչքերով» 2017-2018 ուս. տարվա 2-րդ կիսամյակի սոցիոլոգիական հարցումների արդյունքները: Համաձայն արդյունքների, և՛ առկա և՛ հեռակա ուսուցմամբ ուսանողների կողմից ֆարմացիայի ինստիտուտի բոլոր ամբիոնների և դասախոսների, ինչպես նաև տնօրենի և փոխտնօրենների գնահատականները բարձր են 4-ից:

Նա նշեց, որ մի շարք ուսանողներ շնորհակալանքի և բարձր գնահատանքի խոսքեր են ուղղել նաև իրենց դասախոսներին: Նա շեշտեց, որ մի շարք ուսանողների կողմից առաջարկ է եղել լաբորատոր և գործնական դասերի ժամաքանակի ավելացման վերաբերյալ: Բացի այդ, ուսանողները առաջարկում են նաև քննական գործընթացն առավել թափանցիկ դարձնելու համար ուժեղացնել հսկողությունը միջանկյալ քննությունների ժամանակ, դրանք ևս անցկացնել բանավոր կարգով: Ս. Վարդապետյանը նշեց, որ քանի որ հարցումն անանուն է, հետևաբար ուսանողները հնարավորություն են ունեցել ազատ և անկաշկանդ ներկայացնել իրենց կարծիքները: Այսինքն մեր ուսանողները ուզում են ստանալ գիտելիք և բարյացկամ վերաբերմունք: Կարելի է փաստել, որ մեր ուսանողների բոլոր առաջարկները և ցանկությունները իրատեսական են և հնարավորության սահմաններում դրանք պետք է իրականություն դարձնել:

Որոշեցին՝ Տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

3. Ընթացիկ հարցեր:

3.1 ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտից լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթին մասնակիցների առաջադրման հարցը:

Լսեցին՝ Ս. Վարդապետյանին, ով տեղեկացրեց, որ ԵՊՀ ռեկտորատը հայտարարել է բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթի մասին: Նա նշեց, որ անհրաժեշտ է ներկայացնել մագիստրատուրայի և բակալավրիատի 2-4-րդ կուրսերում գերազանց սովորող ուսանողների թեկնածություններ: Մրցույթին մասնակցելու համար հայտ են ներկայացրել մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհիներ Մելանյա Սամվելի Ղազարյանը, Ադանա Արմոնդ-Մասսիհիի Քեշիշյանը և բակալավրի 3-րդ կուրսի ուսանողուհի Հռիփսիմե Հովհաննեսի Դարբինյանը: Ելույթ ունեցան նաև գիտխորհրդի անդամներ կ.գ.թ. Ա. Հովհաննիսյանը և ք.գ.թ. Ս. Վարդապետյանը, ովքեր նշեցին, որ նրանք ուսումնառության ընթացքում ցուցաբերել են գերազանց առաջադիմություն, ակտիվորեն մասնակցել են ՈԻԳԸ աշխատանքներին և ուսանողական

միջոցառումներին (մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը կցվում են):

Ելույթ ունեցան՝ Գիտխորհրդի անդամներ ք.գ.դ. Ռ. Հովհաննեսյանը և կ.գ.թ. Ա. Հովհաննիսյանը, ովքեր նշեցին, որ նշված ուսանողները ուսումնառության ընթացքում ցուցաբերել են գերազանց առաջադիմություն, ակտիվորեն մասնակցում են ՈՒԳԸ աշխատանքներին և ուսանողական միջոցառումներին, ինստիտուտի հասարակական կյանքին և առաջարկեցին ներկայացնել նրանց թեկնածությունները: Ելույթ ունեցողներին համակարծիք էին նաև գիտխորհրդի մյուս անդամները:

Որոշեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհուրդը միաձայն որոշեց առաջադրել ուսանողուհիներ Մելանյա Ղազարյանի, Ադանա Քեշիշյանի և Հռիփսիմե Դարբինյանի թեկնածությունները՝ լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթին մասնակցելու համար:

Գիտական խորհրդի նախագահ՝
տնօրենի պաշտոնակատար,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Ա. Սադյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ ք.գ.թ.

Ա.Դադայան